

րենց հանգստեան տեղ պիտոր ծառայէ » :

Այդ կիներն որ երիտասարդ ու գեղեցիկ մըն է, շատ անուշ ժպիտով մը այդպէս կը խօսի, անանկ որ իմ վրաս դող կը բերէ։ Այս ատենս սպայակուտի երկու սպայք ձի հեծած Բլաս վանտոմէն գալով գահավէժ ընթացքով դէպ 'ի Օդէլ տը վիլ կը յարձրկին։ Քիչ մը ետքը փողը կը հնչէ, և զօրաց ընկերութիւնը հրապարակին մէջ կը ձևանան։ Օդէլին մէջ կարծես թէ մեծ խառնակութիւն մը կը տիրէ։ Մարդիկ վազելով կը մտնեն ու կ'ելլեն։

Այն սպայք որ հետոս սրճանոցին մէջ կեցած են՝ շտապաւ ոտք կ'ելլեն, և իրենց զօրաց գլուխ անցնելու կ'երթան։ Չայնը կը տարածուի թէ վէռսայլցիք Բլաս Գոնգորտի պատնէշներն առեր են։ « Սոոյգն ըսեմ քեզի, կ'ըսէ սպայս իր գօտին կոճկելով, կարծեմ թէ գէշ չես ըներ տունդ երթալու, կրնայ ըլլալ որ քիչ ատենէն կուրը հոս հասնի »։ Այս խորհրդիս հետեւելու կը պատրաստուիմ, ու յետին հայեցուածք մը կու տամ հրապարակին։ Դաշնակցաց ընկերութիւնը, ոմանք քէյերէն, այլք Ռիւփլի փողոցէն, վազելով ճամբայ կ'ելլեն, « Կեցցէ վիճակ » կանչելով։ Չեմ գիտեր ինչպիսի զարհուրելի ուրախութիւն երեսնուն վրայ կը փայլի։ Երիտասարդ մը, գրեթէ տղայ, քիչ մը ետեւ կը մնայ։ Կին մը դէպ անոր կը յարձրկի ու ծոծրակէն հրելով կը կանչէ անոր. « Հապա դու. միթէ միւսնեւրուն հետ մեռնելու չես երթար »։

Ռիւ վիէյլ տիւ Դանրը կ'անցնիմ, ուր պատնէշ մը շինելու հետ են. ես ալ քար մը կը տանիմ ու կ'անցնիմ։ Քիչ մը անդին խանութները բաց կը տեսնամ, անցուորք բազումք, միով բանիւ կեանք։ Գոնէ այս գործունեայ վաճառականաց թաղը կը ջանայ Բարիզու մէջ ողջ մնալ։ Հոս բնակող մը կարելի էր թէ ամենևին մտքէն չանցընէր այն զարհուրելի քաղաքական կռիւն որ մօտերը կ'ըլլուի, եթէ անցած ատենը չլսէր այն խօսակցութիւնները որոնց

մով ունայն տեղ զբաղած բնակիչքն իրենց սրտին անձկութիւնը կը մատնեն, և թնդանօթն՝ որ անդադար կը թնդայ՝ չկանչէր շարունակ. « Կը լսես ինծի. Բարիզ. ահա տուներդ կը խորտակեմ։ Կը լսես դու. ահա տղաքդ կը ջարդեմ »։

Պուլվարներուն վրայ դարձեալ պատնէշք կան, ոմանք բարձր, այլք դեռ ևս նոր սկսուած։ Բորդ Սէն Մարգէնի մօտ շինուածն ամենէն աւելի ահաւորն է։ Կարծես թէ այս տեղս խռովութեան ու նուաճման արիւնահեղ կրից նախասահմանեալ է։ Կը յիշեմ որ դեռ ևս տղայ եղած ժամանակս 'ի 1852, երկու երկաթեայ վանդակափեղկ զբանց ետեւ զիականեր տեսած էի և նմանապէս ձողերուն վրայ ալ արիւն։ Նորէն թաղս կը դառնամ. այլ ներսէս սաստիկ տըխրութիւն մը կը զգամ, և ինչպէս սըրտաբեկ, անզգայ, և մտածելու անկարող՝ ու երբեմն երբեմն աչքերս գոցելով կ'երթամ, նման այն մեռելի տանց որոնց փեղկերն փակ են։

Կը շարունակուի։

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես Հատ. ԻԹ. Երես 326։)

Գ. — Մ'ենեալ հով։

Է. Տէր տեղաց 'ի Սոգոմ և 'ի Գոմոր ծծումք և հուր 'ի Տեառնէ երկնից, և կործանեաց քաղաքսն գայնոսիկ և գամենայն կողմանս, և գամենայն բնակիչս քաղաքացն և գամենայն բոցս երկրին։— Մեռնեալ. ԺԹ. 24։

Այս ծովը կամ լիճը աշխարհիս պատմութե հնագոյն աւանդութեան մը հետ կապուած է։ Երբեմն հինգ ծաղկեալ քաղաքներ կային հոս. որոց բնակիչքը իրենց մեղաց չափը անցուցած ըլլալով, պատժեց զիրենք Աստուած. այն կենդանի գեղեցիկ տեղուանքը ահաւոր անապատ մը դարձան. և այն զուարթ

հովիտը ժահահոտ լճի մը փոխուեցաւ, Այս հին քաղաքներէն մին միայն, Սեփոր, թերեւ իր նուազ յանցանալը համար՝ աղաւթեցաւ այս ահաւոր պատ- ժէն:

Հնգամատենին մէջ Մեռեալ ծովը ծով աղի կոչուած է, և վերջին Մարգարէներէն ոմանք ինչպէս Յովէլ, եգե- կիէլ ու Զաքարիա Արևելեան ծով կը կոչեն զայն: Յոյնք և Հռովմայեցիք կը պրայիս լիձ անուանեցին, երեսացը վրայ ծփող և եզերաց վրայ գտնուող կարոյն պատճառաւ: Իսկ Արաբացիք լիձ Դովտայ կ'անուանեն զայն, որովհետեւ Աբրահամու եղբորորդին նոյն կողման- քը կը բնակէր: Մեռեալ ծով անունը որ աւելի գործածական է, Եւսեբիոսի և Հերոնիմոսի գրուածոց մէջ կը գրու- նեմք, զոր այնպէս կոչեցին իր անշարժ ալեացը և չրկակայ անկենդան բնութե՝ համար:

Բարձր լեռներէն վար իջնելով, որոց միջի հանգչի Երուսաղէմ, մերկ, սե- պացեալ և անբեր ժայռից մէջէն առանց ծառի, առանց ստուերի, և առանց կանաչութեան երկայն ճամբայ մ'ընդ- առաջ կ'ելայ: Ետքը բարձր լեռանց շղթայից նուազ բարձր ուրիշ լեռանց շղթայ մը կը յաջորդէ, և ժամու չափ գրեթէ հարթ գետնի վրայ կրնայ քա- լուիլ: Վերջապէս կը հասնի լեռանց ամենէն վերջի գիծը, որ յարեմոսից իրենց սահման ունին Յորդանանու հո- վիտը և Մեռեալ ծովուն ջուրերը:

« Հրէաստան ճանապարհորդողին սիրտը, կ'ըսէ Շադոպրիան, սկզբան անտանելի ձանձրութենէ մը կը նե- ղուի, բայց երբ միայնութենէ 'ի միայ- նութիւն անցնելով, միջոցը անսահման կը տարածի աչաց առջին, ձանձրու- թիւնն առ փոքր փոքր կը ցրուի, և հո- գին արհաւիրաց գաղտնի զգացում մը կը զգայ, որ փոխանակ ընկճելոյ զայն, բարձրացունէ 'ի վեր քան զինքն: Ամեն կողմի կարգէ դուրս տեսարանները կը վկայեն թէ այդ երկիրը մեծամեծ հրա- շից տեսարան եղած է. բոցակէզ արե- դակը, վայրագ արծիւը, անպտուղ թզե-

նին, Ս. Գրոց բոլոր բանաստեղծու- թիւնը և տեսարանները հոն ժողովուած են: Ամեն անուն խորհուրդ մը կը պար- փակէ, ամեն քարանձաւ ապագայն կը մերկանայ, ամեն բարձր տեղ մարգա- րէի մը ձայնին արձագանգն կու տայ: Աստուած ինքնին խօսած է այս ափանց վրայ. չորացեալ գետիները, ճեղքեալ ժայռերը, կիսաբաց գերեզմանները ե- ղած հրաշից հաստատութիւն են. անա- պատը մինչև ցայսօր խլացած կ'երևայ վախէն, և կրնայ ըսուիլ որ Յաւիտե- նականին ձայնը լսելէն ետքը չէ հա- մարձակեր հատանել իր լռութիւնը »:

Մեծանուն բանաստեղծին այս գե- ղեցիկ նկարագրութիւնը, Հրէաստանի ուրիշ տեղերէն աւելի Մեռեալ ծովուն չրկակայիցը կը յարմարի: Իրաւքնէ կ'ե- րևայ հոս թէ բնութիւնը վախէն խլացած ըլլայ յետ ահաւոր կործանման վկայ և ակնատես ըլլալուն: Մեռեալ ծովը որ 19 փարսախ երկայնութիւն և 5 փար- սախ լայնութիւն ունի, արևելեան կող- մանէ Արաբիոյ, իսկ արևմտեան կողմէն Հրէաստանի լեռներէն կը սահմանի: Արաբիոյ լեռները հեռուէն նայողին այնպէս կ'երևան թէ կենդանի քարէ շինուած ուղղահայեաց պատեր ըլլան. ոչ ծայր և ոչ գագաթ մը կ'որոշուի, տեղ տեղ միայն թեթեւ ելեէջքներ ու- նին: Իսկ արևմտեան, այսինքն Հրէաս- տանի լեռները, արևելեաններէն նուազ բարձր բայց աւելի անհարթ, կը տար- բերին անոնցմէ իրենց տարբեր բաղկա- ցութեամբը, որովհետեւ կաւի ու աւազի մեծամեծ կոյտերէ կը ձևանան: Երկնից ամենափոքր թռչունն անդամ այն մերկ ժայռից և բոցակէզ աւազից մէջ ուտե- լու խոտոյ թել մը չի գտներ: Այսպիսի լուռ շրջափակէ պատուած կեցած են լճին անշարժ ջուրերը. որուն ափանց աւազը աղի կեղևէ մը ծածկուած է. ամենևին ոչ խոխոջանք և ոչ զովութի մը հեռուէն լճին մերձակայութիւնը կ'իմացնէ. գետինը սփռուած քարերը կրակ կը ցայտեցնեն. ալիքները անշարժ և բոլորովին մեռած են ափանց վրայ. չորս կողմի ամայնութիւնը խօսքով բա-

ցատրեւն անկարելի է: Բայց հանդերձ այսու՝ առջի ճանապարհորդաց պատմած շատ մը զարմանալի պատմութիւններն, սաստիկ ջերմ երեակայութենէ ստեղծեալ բաներու կարգն դնելու է: Վերջի միջոցներս եղած փորձերն կը ցուցնեն որ լճին արտաշնչութիւնը այնչափ մշտասկար չէ որ վրայէն անցնող թռչնոց մահ պատճառէ. վասն զի ստէպ կը տեսնուին ծիծառնիկներ, որ կը թռչտին ջրոյն մակերևութին վրայէն, իրենց բռնոցը շինութեան պէտք եղած ջուրն տանելու համար: Զրոյն մէջ ձգուած մարմինք կը հպատակին ծանրութեան ընդհանուր օրինաց. ոչ անդնդոց մէջ ջրոց հանդարտութեան ժամանակ, ընկղմած քաղաքաց կմախքներ կը տեսնուին, և ոչ Մեռեալ ծովուն ջուրը մորթը կը մաշեցունէ, այլ միայն թթու և աղային համ մը կը թողու վրան: Թէպէտ այսպիսի վտանգներ ու երեւոյթներ չի կան, սակայն լճին ու շրջակայ երկիրներուն տեսքը, միշտ ամայութեան ընդարձակ պատկեր մը ներկայացունեն. և պանդուխտը կամ ճանապարհորդը այն ավանց վրայ նստած, իրենցոց ահաւոր պատմութիւնը միտք կը բերէ. և այս երկնային ցասման յիշատակարանին առջին ակամայ կրօնական երկիւղ մը կը զգայ, զոր կարող չէ եղծանել դարուս սկեպտական հոգին:

Տեղւոյն բուսական աճման արգելման պատճառ ոչ թէ միայն երկրին բնական անպտղութիւնն է, այլ և լճին ջրոց աղային համը որ ծովու ջրէն հազար անգամ աւելի թթուահամ է: Շրջակայ երկիրը որ ծածած է այս աղը, ամենևին անպտուղ է. և օդն իսկ որ գոլորշացմամբ լի է նոյն աղով, ծծրմբոյ և կպրոյ գոլորշիքն ալ ընդունելով, կ'ապականէ ամեն կենսական սկիզբն: Բոլոր ճանապարհորդք միաբան են յայսմ թէ լճին մէջ ամենևին կենդանի էակ չի գրտնուիր, զոր յիշատակած է նաև Ս. Հերոնիմոս Եղեկիէլի յիշատակարանաց մէջ: Պ. տը Պուզդէն Մեռեալ ծովուն ջուրէն քանի մը լիտր բերել տալով

Միջերկրականի եզերքը, և նոյն վայրկեանին բռնուած և դեռ կենդանի ձկեր նոյն ջրով լեցուն ամանի մը մէջ ձգելով, կէս վայրկեան չանցած մեռան: Քննութեամբ ցուցուեցաւ որ ձկանց մարսողական գործարանները յայտնապէս ֆնասուած չէին, և մահը անշնչելութենէ պատճառած էր. և կամ թէ թոյնը ջրային դրութեան վրայ ազդեցութիւն մ'ըրած էր: Մինչև հիմա չի գիտցուիր թէ ինչ կերպով կը սպառի Յորդանանու՝ Մեռեալ ծովուն մէջ թափած ջուրերը. ոմանք Միջերկրականի հետ հաղորդակցութիւն մը ենթադրեցին. և այլք նոյն երևոյթը գոլորշացմամբ մեկնեցին, որ աւելի ճշմարտանման է:

Դ. — Յորդանան:

Պաղեստինու ամենամեծ գետը և իրաւամբ այդպիսի անուան արժանաւորը՝ Յորդանանն է. որուն առանձին պատմութիւնը կրնայ նոյն իսկ Պաղեստինու պատմութիւն ըսուիլ: Որչափ մեծամեծ զիպուածներ պատահեցան իր ջրոց և իր եզերաց վրայ. որչափ գեղեցիկ յիշատակաց հետ կապուած են իր թրջած գետինները:

Մովսէս կը պատուիրէ իսրայելացւոց որ Յորդանանը անցնեն և իրենց տրուած երկիրը մտնեն և ետքը, 'ի նշան երախտեաց անտաշ քարերէ սեղան մը կանգնեն, և ողջակէզ ու խաղաղական զոհեր մատուցանեն Աստուծոյ: — Յետու Երիքովի տիրելու կ'երթայ, և Յորդանանու ջուրերը հրաշքով մը բացուելով, աղատ ճանապարհ կը բանան տապանակը տանող քահանայից և բոլոր բանակին: — Նոյն հրաշքը, այս ինքն ջրոց բաժանումը, կը կրկնուի նաև 'ի շնորհս Եղիայի, որ իր աշակերտին Եղիսէին հետ առանց ոտքերին թրջելու կ'անցնին Յորդանանէն: Եղիա հրեղէն կառօք երկինք վերանալով, իր զգեստը Եղիսէին կը թողու, որ գետին միւս կողմն ըլլալով, կը

զարնէ անով ջրոյն, և նոյն զգեստին զօրութեամբը կ'անցնի գետէն և Երի-
քով կու գայ: Յորդանան գետը դեռ
ուրիշ շատ գեղեցիկ գէպերով կա-
պուած է, զորոնք զանց կ'առնենք յիշե-
լու իբրև քաջ իսկ ծանօթ, մանաւանդ
զանոնք որ տեղի ունեցան Յովհաննու
Մկրտչի և Յիսուսի ժամանակ, որոնք
աւելի համբաւաւոր ըրին Յորդանան
գետը:

Յորդանանու քովերը երբեմն շատ
մը ծաղկած քաղաքներ կային, որոնց
մէջ առաջինն էր Երիքով, քաղաք
արմաշենեաց, որ բազմաթիւ բնակիչ,
հարուստ մշակութիւն և ծաղկեալ վա-
ճառականութիւն ունէր, որով կեանք
և շարժում կը պատճառէր նոյն կող-
մանց: Տիրերիւ լճէն ինչուան Մեռեալ
ծով տարածուած միջոցը, իր գեղեց-
կութեւն համար դաշտաւայր ըսուած
է Ս. Գրոց մէջ: Բայց հիմա ինչպիսի
փոփոխութիւն. « Լեռանց երկու շղ-
թայից մէջ տարածուած ընդարձակ
հովիտը, կ'ըսէ Շաղոպրիան, նոյն Ս.
Գրոց դաշտաւայրին վրայ խօսելով, եր-
կար ժամանակէ 'ի վեր տեղի տուած
ծովու յատակին նմանութիւն ունի.
աղով ծածկուած եզերքներ, չորցած
տիղմեր, շարժական և ինչպէս թէ ա-
լիքներէ ածու ածու եղած աւազներ:
Այս անկենդան գետինն վրայ հազիւ
թէ աստ անդ կրնայ պզտի թուփեր ա-
ճիլ. որոնց տերեր աղով ծածկուած է,
ուսկից կ'առնուն իրենց անունդը. իսկ
կեղւնին ծուխի հոտ ու համ ունին:
Փոխանակ շինից քանի մը աշտարակաց
միայն աւերմունքներ կը նշմարին: Ընդ-
արձակ հովիտին մէջէն գունատեալ գետ
մը կ'ընթանայ, որ կարծես թէ ակամայ
գէպ 'ի զինքը իր մէջ ընկզմող ծովակը
կը քալէ: Աւազուց մէջ անկարելի էր
որոշել այս գետին ընթացքը, եթէ իր
եզերաց վրայ ուռենիներ ու թուփեր ա-
ճած չլլային. որոց մէջ կը ծածկուի Ա-
րաբացին և ճանապարհորդաց ու պան-
դըխտաց վրայ յարձըկելով կը կողպա-
տէ զանոնք »:

Թէպէտ և այս կողմերը բոլորովին

տարբեր վիճակ ունին քան ինչ որ ու-
նէին երբեմն, սակայն ճշմարտն ըսե-
լով մեծանուն ճանապարհորդին նկա-
րագրութիւնը քիչ մը չափազանց է, և
թերեւս այս բանս անկէ յառաջ կու
գայ որ Շաղոպրիան Մեռեալ ծովը թա-
փելու կէտին տեսած ըլլայ զՅորդա-
նան: Այս ինչ ստոյգ է որ Յորդանա-
նու հովիտը, և մասնաւորապէս Տիրե-
րիւ լճին մօտերը կը պահէ տակաւին
իր նախկին ծաղկածութեան քանի մը
հետքերը:

Յորդանան գետը Հերմոն լեռանց մէ-
ջէն կը բխէ, որ Լիբիոյ լեռանց շղթայից
հարաւային ճիւղերէն մէկն է, և քիչ
մը տեղ ընթանալէն ետքը Սամոյրոնիթ
լիճը կը թափի որ Ս. Գրոց մէջ Զուրք
Մարունայ ըսուած է, ուսկից անցնելով
Հրէաստանի երբեմն ծաղկած հովտաց
մէջէն առաջ կը տանի իր ճամբան: Վե-
րոյիշեալ լճէն կէս փարսախ հեռու,
Յակովթայ որդւոց կամուրջը կայ, ո-
րուն այսպէս կոչուելուն պատճառն այն
է՝ որ ըստ ժողովրդական աւանդութե-
ն, Յակովթ նահապետը Միջագետէն իր
ընտանեօքը դառնալու առեն հոնկէց
անցած ըլլայ Յորդանան գետը: Այս
կամուրջը որ պազալթէ շինուած է, չորս
կամար ունի, և գետին լայնութիւնը
հոս 35 ոտնաչափ է:

Յորդանան երկու փարսախ ալ յա-
ռաջելով Տիրերիւ լիճը կը թափի: Այս
լիճը որ երբայեցեբէն Եւալ Գիւնեքէր
(իսկ Գիւնեքէր թայ) կ'ըսուի արեւմտեան
եզերաց վրայ եղած նեփթալիգ քաղ-
քին անունէն, աւելի ետքը Գեննեսա-
րեթայ լիճ ըսուեցաւ. Գալիլիա իս-
րայիլն ալ որ կը յիշուի Աւետարանին մէջ,
միշտ նոյն լիճն է. և այժմեան անունն
իսկ ամենահին է, վասն զի Յովհաննու
Աւետարանին մէջ յիշատակուած կը
գտնենք: Մինչև ցայսօր նոյն կողմերը
գեռ ևս գեղեցիկ և հարուստ է տուն-
կերով, և կրնայ ըսուիլ որ Պաղեստինու
միայն այս կողմը հին ծաղկածութեան
հետքը կը պահէ: Բայց թէ որ բնու-
թիւնն ուրիշ տեղեաց պէս հոս ալ ան-
հաշտ ակամբ նայելու ըլլար, նոյնպէս

հոս ալ բազմաթիւ աւերակներէն ժամանակին բրած ահագին աւերումները յայտնի կը տեսնուէին:

Այս լճին շրջակաները զարդարող Տիբերիա, Բեթսայիդա, Կափառնաուժ և ուրիշ քաղաքացի ողորմ մնացորդները կը տեսնուին հիմա: Այժմեան Դապարիէ քաղաքը, Գալիլիոյ հին մայրաքաղաքին աւերակներէն քիչ մ'աւելի հիւսիսային կողմը շինուած է, որ 4000 բնակիչ ունի և պազալթէ պարսպով մը պատած է: Կեցած են տակաւին Տիբերիոյ անուանի ջերմուկներն, և միշտ բայց մասնաւորապէս յուլիս ամսոյն մէջ Ասորեստանէն շատ մարդկանց յաճախութիւն կ'ըլլայ հոս:

Թորդանան գետը Տիբերիա լճէն ալ ելլալով կը շարունակէ իր ճամբան դէպ'ի հարաւակողմը. և քսան և հինգ փարսախ տեղ կտրելէն ետքը կ'երթայ կը թափի Մեռեալ ծովը, ինչպէս թէ վերջապէս գերեզմանի մը մէջ աներևութանալու համար:

Չենք կրնար վերջ տալ մեր խօսիցը, առանց երկու խօսք մ'ալ երկրովի վրայ զրուցելու, որ Հրէաստանի ամենահին քաղաքացի մէկն է, ու Հրէից ֆանանու երկիրը մտնելու ժամանակ առջի տիրած քաղաքը: Ասիկա Թորդանան էր կոչուած: Երբեք մեր քաղաքը մը դարձած էր. Եղիա ու Եղիսէ հոչակաւոր մարգարէները բնակեցան հոն: Հրէից Բաբելոնի գերութենէն դառնալէն ետքը, երկրով երուսաղեմէն վերջը առաջին քաղաք և արևելեան Հրէաստանի մայրաքաղաքըն էր: Հերովդէս Ա. շատ մը գեղեցիկ շէնքերով զարդարեց զայն. տաւրոյն մեծագոյն մասը հոն կը նստէր, ուր որ իր կեանքն ալ կնքեց: Վեսպասիանոս կործանեց զերկրով, և Ագրիպանոս նորէն կանգնել տուաւ, բայց խաչակրաց ժամանակ բոլորովին կործա-

նեցաւ և ամենեին մնացորդ մը չը թողուց: — Երիքուլի համբաւաւոր վարդը հինգ բթաչափ բարձրութեամբ թուփ մ'է, որ կը ձևանայ շատ մը պզտի ճիւղերէ, որոնք ամենապզտի ծաղիկ ու տերև կու տան: Պանդուխտները կ'ըսեն որ այս վարդերը անապատին մէջ այն կէտերուն վրայ կ'աճին, ուր կոխեց Տիւրամայրն Եգիպտոս փախչելու ժամանակ. կ'ըսեն թէ այս տեսակ վարդը չորնալէն վերջն ալ եթէ ջրոյ մէջ դրուի, նորէն կը սկսի ծաղիկ տալ:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տես Հատ. ԻԹ. Էրես 348)

Բաղադրուածքիւն Արեան.

Թող վերջին խօսք մըն ալ զուրցենք ու մեր պատմութեան առաջին մասը կնքենք: Չենք կրնար մեկնիլ առանց վերջին բարև մը տալու այդ քաղաքին որուն վրայ այնչափ խօսեցանք, այդ ընտիր հոգաբարձուին, որ ընդունածը՝ ամենայն հաւատարմութեամբ կը դարձնէ, և տան ամեն հոգը ինքը կը տեսնէ: Բաւականապէս տեսանք թէ ինչպէս կ'աշխատի, սակայն դեռ ևս անոր անձնական ստորագրութիւնը քեզի չեմ բրած, և ոչ ալ ըսած եմ թէ ճշդիւ ինչով կը բաղկանայ:

Հարկ է որ դարձեալ քեզի հաշիւներու ցուցակ մը շինեմ, և զուրցուած է թէ այդ բանը պզտի աղջկանց ախորժեղի չէ: Եւ սակայն ատիկայ մէկ հատիկ միջոցն է մարդուս որ իր գործոց մէջ աղէկ յաջողի: Ժամանակաւ, երբ ընտանեաց մայր ըլլալով դէպքն ունե-